




Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

3886

ՊՐԻՆՏՏԱՐՆԵՐ ԲՈՒՈՐ ՅԵՐԿՐՆԵՐԻ, ՄԻԱՅԵՒ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
Ազիտ-սլոպազանդային սերիա

№ 5

Կ. ՌԱԴԵԿ

ՀՈԿՏԵՄԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ
ՅԵՂ
ՆՐԱ ՏԵՂԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թարգմանեց՝ Կ. Հ.



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ — № 29.
ՅԵՐԵՎԱՆ—1922

9(47)/1917

Ռ-14

3886

9(47) 1917
7-1400

2011-07

24 JAN 2006

1585-02

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՆՐԱ ՏԵՂԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1905—1906 թվ., Առաջին Ռուսական Հեղափոխությունից առաջ, բանվորական շարժման ինքնորոշման հարցում մեծապես կարևոր էր այն, թե վորպիսի դեր է սոցիալական բնույթ կունենա ապագա ռուսական հեղափոխությունը: Ի՞նչ կը լինի այն՝ բուրժուական, թե՞ բանվորական հեղափոխություն: Իսկ յեթե բուրժուական, ապա վժիր դասակարգն է լինելու նրա գեկավարը: Ինչպիսի վերաբերմունք կը լինի դեպի մյուս դասակարգերը:

Առաջին հեղափոխությունն իսկ լուծեց մի շարք վիճելի հարցեր: Թեյե նա չհասավ իր գաղաթնակետին և ճնշվեց ավելի շուտ, քան կարող էր զբաղվել վճռական հարցերով, ինչպես իշխանություն հարցն է, այնուամենայնիվ միանգամայն պարզորոշ դարձավ այն, վոր բուրժուական հակահեղափոխական դասակարգ է, մի դասակարգ, վորն ամեն կերպ ձգտում է համաձայնություն գտնել և կապվել հին կարգերի, կիսաճորտատիրական ցարիզմի հետ՝ բանվորության դեմ պայքարելու համար: Հեղափոխական հանդիսացան յերկու դասակարգ՝ բանվոր դասակարգը և գյուղացիությունը, ըստ վորում բանվոր դասակարգը կատարում էր հեղափոխության գլխավոր շարժիչ ուժի, դեկավարի դերը:

Հետագա տասնամյակի ընթացքում, առաջին հեղափոխությունից մինչև 1917 թվ., հեղափոխության

թ. 2. 9.

1003
19349

4824-88

Լուսժողովուրդի տպարան Վաղարշապատում

035

շուրջը յեղած վեճերը տեղի տվին առողջա հարցերին: Այդ հարցերի կենտրոնն էյին կաղմում նախ՝ բանվոր դասակարգի կազմակերպումը հակահեղափոխութեան շրջանում և այնուհետև այն սոցիալական փոփոխութեանները, վորոնք արդէոնք յեղան առաջին հեղափոխութեան և առաջին հերթին գյուղացիութեան մեջ տեղի ունեցած փոփոխութեանները և Ստոլիպինի ագրարային քաղաքականութեանը: Մարտյան հեղափոխութեանը, իսկ հետո հոկտեմբերյանը, քառամյա թորհրդային իշխանութեանը և վերջապէս մեր նոր տնտեսական քաղաքականութեանը նորից առաջագրեցին հեղափոխութեան բնույթի խնդիրը:

Մենչևիկները և նրանց միջադպրային ընկերակիցները, այն է՝ սոցիալ-դեմոկրատներն ու կենտրոնականները չարագին վրձնում են թորհրդային իշխանութեան նոր տնտեսական քաղաքականութեան առթիվ և հարց են տալիս մեզ, «ի՞նչ կարիք կար ապարդյուն գործ սկսել: Չի՞ վոր պարզվեց, վոր հեղափոխութեանը բուրժուական է, վորովհետև դուք, բոլշևիկներդ, այժմ ստիպված եք ձեր ձեռքով քանդված կապիտալիզմը նորից վերաշինել:»

Այդ հարցերին հարկավոր է պատասխան, յի՞թե մենք ինքներս ցանկանում ենք հասկանալ մեր չորսամյա պայքարի իմաստը, այն փոփոխութեանների իմաստը, վոր մենք կատարում ենք մեր քաղաքականութեան մեջ, Արդոք իսկապէ՞ս մենք հրաժարվում ենք 4 տարվա անցյալից:

Վերալիսին է իրապէս ուսական հեղափոխութեանը. պրոլետարական, թե՛ բուրժուական: Այս հարցերի մասին արժէ առանձնապէս խոսել այսօր, յերբ մեր հայացքներն ու հիշողութեանները ուղղված են դեպի հոկտեմբերի փառավոր սրերը, դեպ այն որերը, յերբ

բանվորական և գյուղացիական մասսաներն ապստամբեցին բուրժուազիայի տիրապետութեան դեմ:

Նախ պետք է արձանագրել մի քանի փաստեր: Բոլոր հեղափոխութեանները, սկսած Նիդերլանդիայի ապստամբութեանից իսպանիայի դեմ և այնուհետև անդլիական ու ֆրանսիական հեղափոխութեանները, կամ ավելի ճիշտ յերեք ֆրանսիական հեղափոխութեանները, կոչվում էյին բուրժուական հեղափոխութեաններ, վորովհետև վերջիններս արդէոնք է յեղել բուրժուազիայի տիրապետութեանը: Բուրժուազիան հեղափոխութեանց աստիճաններով բարձրացել և հասել է իր համաշխարհային հաղթանակին, իր տիրապետութեանը բոլոր քաղաքակրթված յերկրներում: Սակայն այդ հեղափոխութեաններից վոչ մեկը չի յեղել դուռ բուրժուական, յի՞թե ուշագրութեան առնվին այն դասակարգերը, վորոնք մասնակցել են հեղափոխութեաններին, և այն նպատակները, վորոնք դրված են յեղել այդ դասակարգի առջև: Թե՛ Նիդերլանդական և թե՛ անգլիական հեղափոխութեան մեջ մասնակցութեան է ունեցել կալվածատեր դասակարգը, և այն էլ վոչ վերջին շարքերում:

Նույնիսկ անգլիական հեղափոխութեան մեջ նախորդ դեր է կատարել Կրոմվելն ինքը կալվածատեր էր, նրա թիկունքում կանգնած էր անգլիական կալվածատիրական դասակարգի սովոր մասը:

Միաժամանակ անգլիական հեղափոխութեանից սկսած յերևան է գալիս հեղափոխութեանց մեջ վոչ միայն արհեստավորների ու նորածին պրոլետարիատի մասնակցութեանը, այլ և մենք տեսնում ենք մի ուժեղ հոսանք, վորը ձգտում է անցնել նոր կազմավորվող բուրժուական հասարակարգի սահմանները: Լեվելներ, դիգերներ, ինչպէս և քրիստոնեների շարժումներ:

բը պրոլետարական, դեմոկրատական շարժումներ են, վոր ձգտում են վերացնել կապիտալիստական մրցակցությունը ու մասնավոր սեփականությունը և ստեղծել սոցիալիստական հասարակարգ ու համայնական սեփականություն: Այդ շարժումը ընդգրկում և հոծ մասսաներ, վորոնց համար սոցիալիզմը՝ կրոն և Նոքա դեռ այն ժամանակ վտանգ են ներկայացնում գեռատի բուրժուական հասարակարգի համար և ճընշվում են ամենայն դաժանությամբ, վորին ընդունակ և բուրժուազիան իր շահերը պաշտպանելու: Կրոմվիլը խորապես գիտակցում էր այն հակասությունը, վոր կար կապիտալիզմի և այդ կրոնական սոցիալիզմի միջև: Եր ճառերում սոցիալիզմի դեմ նա առաջադրում էր այն բոլոր արդումենտները, վորոնցով XIX դարում բուրժուազիան կռվում էր հեղափոխական սոցիալիզմի դեմ:

Ֆրանսիական հեղափոխության ժամանակ, նրա պարզացման ընթացքում, ստորին խավերում ուժեղանում և սոցիալիստական հոսանքը հանձնու Անտոսեյի, Գեշելիսի կուսակցությունների, վորոնց պատմությունը դեռ չէ գրված, վորոնց մտաին յիշած գրականությունը շատ աղքատ և, բայց վորոնք հսկայական դեր են կատարել 1793 թ. անցքերում: Ռորեսպիերը գիտակից ու համոզված հակառակորդն էր այդ ձգտումների: Հարավային Ֆրանսիայի առևտրական բուրժուազիայի ներկայացուցիչ Ժիրոնդիստ Բրիսսոյի պամֆլետներում կարելի չէ գտնել վոչ միայն այն բոլոր արդումենտները, վորոնցով հետադաշում բուրժուազիան կռվում էր սոցիալիզմի դեմ, այլև կարելի չէ հայտնաբերել այն կատաղի ատելությունը, վորով լցված էր բուրժուազիան դեպի կոմունիստները Ֆրանսիական հեղափոխության ժամանակ: Կոմունիստ-

ներին թիկունքում ստվարաթիվ՝ կանգնած էյին այն տարրերը, վորոնք 1793 թ. փրկեցին Ֆրանսիան: Մանր բուրժուական դեմոկրատ Ռորեսպիերի անկման պատճառներից մեկն էլ այն և, վոր նա իր արշավանքով ընդդեմ Անտոսեյի և նրանց պաշտպանների Պարիզի կոմունայում (ինչպես Շոմետի) հետու մղեց իրենից Պարիզի բանվորական մասսաներին և առմիշտ մնաց նրանց թշնամի: Շոմետի և Լեռուի աբյան համար Ռոկետի հրապարակում հատուցում ավելի Ռորեսպիերը, վորովհետև նա, կարվելով բանվորական զանգվածներից, վոչ միայն հարկավոր չեղավ հակաֆեոդալական կռվում ամբապնդված Ֆրանսիական հանրապետության գեռատի բուրժուազիայի տերմիդորյաններին, այլև միանգամայն անվտանգ էր այլևս նրանց համար: Յերբ գիլյոտինի վրա, սպեկուլյանտների և վոսկե յերիտասարգության ցնծագին վոնոցի ժամանակ ընկավ Ռորեսպիերի գլուխը, Պարիզի շրջաններում չարասրտությամբ լռում էյին:

1830 թ., իսկ առավելապես 1848 թ. հեղափոխության ընթացքում Ֆրանսիայի բանվոր գասակարգը և նրան հետևող արհեստավորներն այդ ժամանակ արդեն մի հարաճուն ահավոր ուշ իյին ներկայացնում, մի ուշ, վորը պարզապես ըմբռնում էր պրոլետարական և կապիտալիստական շահերի ներհակությունը: Այդ մասսաները, վոր դեռ չէին միախմբված խոշոր արդյունաբերությամբ, վորոնք տակավին չունեյին մի ընդհանուր գաղափարով շարժապնած կուսակցություն, վորոնք մաքառում էյին հանուն սոցիալական հանրապետության մշուշավոր լուսնագի, հեղափոխության շարժիչ ուշին ու տիրապետողն էյին հանդիսանում: Այդ մասսաների ջախջախումը հունիսյան սրերին՝ հեղափոխության խորտակումն էր: Հաղթելով

բանվորներին, բուժուազիան չը նպաստեց հեղափոխութեան դարգացման, այլ վերջ դրեց նրան, խոնարհվելով Նապոլեոն III-ի սրի առաջ:

Ինչ և ասում այս պատմական տեղեկանքը: Բոլոր բուժուական հեղափոխութեաններին, վորոնք հնարավոր են յեղել այն պատճառով, վոր գոյութեան և ունեցել բուժուազիան, պատմական թատերաբեմում յերևացել և բանվոր դասակարգը, առանց վորի չկա բուժուազիա: Առաջին շրջանում բանվոր դասակարգը գտնվում էր բուժուազիայի դեկավարութեան ներքո: Միաժամանակ հեղափոխութեան ընթացքում նա գիտակցում էր, վոր այն, ինչի ձգտում և բուժուազիան, հակասում և իր (բանվորութեան) շահերին և նա ջանում էր ընդլայնել բուժուական հեղափոխութեան սահմանները և այդ հեղափոխութեան նպատակները վրայով պայքարել հանուն սոցիալիզմի մշտնապար լուզունքների, իր շահերի համար: Դեռ 1896 թ. եղվարդ Բերնշտեյնը, վոր այն ժամանակ դեռ համարվում էր հեղափոխական մարքսիստ, Երեսիկի 1848 թ. Ֆրանսիական հեղափոխութեան պատմութեան վերջաբանում ապացուցում էր, վոր դա յեղել և բանվոր դասակարգի սխալը, վոր հեղափոխութեան բուժուական բնույթի պատճառով բուժուական հասարակարգի շրջանակից դուրս, բանվորութեանը վոչ մի նպատակ չը պետք և հետապնդեր: Բայց բանվորները չը սահմանափակեցին իրենց նպատակները բուժուական հեղափոխութեամբ և վոչ այն պատճառով, վոր Ե. Բերնշտեյնի ուսմունքը անհայտ էր նրանց: Այն, ինչ ասում և Բերնշտեյնը բանվորութեանն ասում էին շատերը թե բուժուազիայի և թե մանր-բուժուական սոցիալիզմի ներկայացուցիչներից:

Բանվորները չեյին կարող սահմանափակել իրենց

նպատակները այն պատճառով, վոր նրանք դուրս էին յեկել նկուղներից ու կեղտոտ արհեստագործներից: Նրանք տանջվում էին և չեյին կարող հանդիստ տեսնել այն, թե ինչպե՞ս բուժուազիան վայելում և բարեքները: Նրանք պետք և կովեյին իրենց սեփական շահերի համար, նրանք պետք և ձգտեյին իրենց սեփական նպատակներին, վորովհետև զգում էին, վոր իրենք այն ույժն են, վորը տապալեց հին կարգերը, և տեսնում էին, վոր բուժուազիան ցանկանում և միայն ձեռնափոխել բանվորութեան սոցիալիզմը:

Նրանք պետք և առաջ գնային, վորովհետև այդպիսի նրանք առհասարակ ի վիճակի չեյին լինի հաղթել հին աշխարհին: Նրանք կործանեցին հինը, ձգտելով առաջ բուժուական շահերի սահմաններից դուրս: Մ. Ենգելսն արդարացի չէր, յեթե խոսում էր պատմական որևէ մասին, այն որևէ, վորը նա սահմանել էր հեղափոխութեանների վորձի հիման վրա, և վորն ասում և, վորպեսզի կործանել հինը, անհրաժեշտ և, վոր հեղափոխական դասակարգը, հեղափոխութեան անորենը առաջադրի իրեն այնպիսի նպատակներ, վորոնց իրազործումը տվյալ պայմաններից ու հնարավորութեաններից դուրս և գտնվում: Առումն անցնելու համար մարդիկ աշխատում են թռչել նրա հանդիպակաց ակից հեռու: Եւ Ռոզա Լյուքսեմբուրգը իրավացի չէր, յերբ պնդում էր, վոր բոլոր բուժուական հեղափոխութեաններում բանվորների պրոլետարական, կոմունիստական ձգտումները հանդիսացել են մի ույժ, վորի շնորհիվ միայն հնարավոր և յեղել տապալել տվյալական կարգերը:

Բոլոր բուժուական հեղափոխութեանների պատմական միտումների այդ փորձն անհրաժեշտ և ուսուական հեղափոխութեան բախտն ու վիճակը տեսականորեն հասկանալու համար:

Յերբ 1904—1905 թ. թ. վեճ կար ուսական հեղափոխութեան ընդդէմ մասին. Տրոցկին միանգամայն ճիշտ նկատում էր, վոր անկախ մեր կամքից բանվորութեանը կանցնի հեղափոխութեան բուրժուական սահմանները, վորովհետեւ յեթե նա՝ բուրժուական հեղափոխութեանը ավարտելու յետեւ կարգերը խորտակելու համար, պետք ե իշխանութեանը վերցնի իր ձեռքը, թեկուզ գլուղացիութեան հետ միասին և գործնականապէս կը մոտենա գործադուրկների և լուսուսների (բանվորների մասսայական արձակում) հարցերին, անխուսափելիորեն ստիպւած կը լինի լուծել այդ հարցերը հանուն իր սեփական, սոցիալիստական շահերի և Կաուցկին, վորն այժմ միայն խարխալում ե վորպէս մի իսկական մենշէիկ, այն ժամանակ Ռոզա Լյուքսեմբուրգի հետ միասին հայտարարում եր, վոր ուսական հեղափոխութեանը և բուրժուական և և ոչ բուրժուական, պրոլետարական, վորովհետեւ թեյեւ նա հող տալով գլուղացիութեան, վորպէս ապրանքներ արտադրողի, գլուղում իրականացում և բուրժուական կյանքի սկզբունքները, սակայն զեկավար ունենալով բանվոր դասակարգին, պետք ե փորձի սոցիալիզմը իրականացնել քաղաքում:

Ռուսական հեղափոխութեանը—ստում եր այն ժամանակ Կաուցկին—իր ամբողջ պատմական միջավայրով ներկայացնում ե մի փոխանցում, վորը կատարւում ե բուրժուական հեղափոխութեանից զեպի պրոլետարական և յեթե ուսական հեղափոխութեան ազդեցութեամբ հեղափոխութեանը զարգանա Յեւրոպայում—իսկ այնանց նա կը լինի միայն պրոլետարական—ուսական հեղափոխութեանը ստիպւած կը լինի յուրահատուկ ձևերով ձգտել սոցիալիզմի իրականացման: Յերբ տասը տարի անց՝ Կաուցկու այդ դատողու-

թեաներից հետո պայթեց մարտյան հեղափոխութեանը, պրոլետարիատի առաջապահի զեկավարները՝ բոլշեիկները, պարզապէս ըմբռնելով սուս անտեսութեան մանր-բուրժուական ընդդէմը, զիտակցաբար աշխատում եյին սահմանափակել պրոլետարիատի առաջադրած նպատակները՝ սոցիալիզմի անմիջական իրականացումը փոխարինելով փոխանցման շրջանի հերթական խնդիրներով: Պետական սինդիկատներ՝ Բանվոր-գլուղացիական խորհուրդներ իսկուղութեամբ, բանկերի ազգայնացում՝ առանց կապիտալիստական սեփականութեան վոչնչացման—անա այն նպատակը, վոր նախագծել եր ընկ. Լենինը իր պլատֆորմում 1917 թ. ապրիլին: Պրոլետարիատի և գլուղացիութեան կողմից իշխանութեանը գրավելուց հետո, խորհրդային Իշխանութեանը աշխատում եր զարգացնել և կարգավորել բանվորական կոնտրոլը արդյունաբերութեան վրա և վոչ ևքսպրոպրիացիայի յենթարկել (բռնադրովի կայքը) բուրժուազիային, իսկ բանվորութեանը տարերայնորեն ավելի հեռու յեր դնում: Նա գրավում եր գործարանները, ազգայնացնում եր ձեռնարկութեանները գաւառում, հակառակ կենտրոնական իշխանութեան: Յեւ նա այդ անում եր վոչ այն պատճառով, վոր չը գիտէ բոլշեիկների կուսակցութեան ծրագիրը, այլ անում եր, վորովհետեւ հանգիւում եր բուրժուազիայի զիմադրութեան, վորն աշխատում եր լքել բանվորական կոնտրոլը կամ թագցնել իր կապիտալները, վորոնք անհրաժեշտ եյին արդյունաբերութեանը վարելու համար, և նա պետք ե բաներ բուրժուազիայի կողորդից: Իսկ յեթե զրա համար անտեսական անհրաժեշտութեան ել չը լինէր, բուրժուազիային ստապաւող և իշխանութեանը գրաված դասակարգը չէր կարող թույլ տալ բուրժուազիային, վոր նա հանգիստ

շարունակե տիրել արդյունագործութեան միջոցներին: Բանվորութեան իշխանութեանն ու ուշիւ տիրապետում ելին յերկրում և նա չեւ կարող հաշտվել բուրժուազիայի տնտեսական տիրապետութեան հետ:

Ընկ. Լենինի ձառում 1918 թ. ապրիլին խորհրդային Իշխանութեանը նպատակ ուներ զբաղվելու մերձավոր խնդիրներով և կարգավորելու այն կուրսը, վորն այժմ կոչվում է նոր տնտեսական քաղաքականութեան: Խորհրդային Իշխանութեանը ցանկանում եր համաձայնութեան կնքել կապիտալիստների հետ, մասնավոր կապիտալիզմից ստեղծել նոր, պրոլետարական պետութեան հակոցութեամբ գործող կապիտալիզմ: «Սոցիալիզմի շինարարման գործը մենք պետք է սովորենք տնտեսային թափավորներից» — ասում եր Ընկ. Լենինը: Բայց սրա հետ միաժամանակ զուգուրում, ուր սոցիալիզմ ստեղծելու վոչ մի պայման գոյութեան չունեի, Խորհրդային Իշխանութեանը ստիպված եր գործել միանգամայն հակառակ ուղղութեամբ: Հաց ստանալու համար իշխանութեանն ստիպված եր զինել բանվորների և չքավոր գյուղացիներին՝ գյուղական գորբաւների դեմ կռիւլու: Պատերազմի պատճառով քայքայված կապիտալիզմը Հնչին, տննշան միջոցներ թողեց Խորհրդային Իշխանութեան, վորպեսզի վերջինս կարողանար ապրանքափոխանակութեան կատարել հացի հետ: Խորհրդային Իշխանութեանը տակավին ամբապնդված չեւ և չունեի իր տրամադրութեան տակ այնպիսի ուժեղ ապարատ, վոր կարողանար հաց ստանալ գյուղից, պարենաւորքի ձեով: Գյուղացին, վոր բանվորի ոգնութեամբ գին շարունակ կալվածատերի, ցարի ու բուրժուազիայի լուծը, վորը բանվորի ոգնութեամբ հող ստացավ, նույնպես չեւ կարողանում սահմանափակվել:

Նա ցանկանում եր ապրել ազատ, արտապետական կյանքով, առանց պարտավորութեանների բանվոր-գյուղացիական պետութեան հանդեպ: Գյուղացին, հաց արտադրողը, ցանկանում եր իր հացը փոխանակել վորքան կարելի յե շատ ապրանքներով, ի վնաս պետութեան, ի վնաս բանվոր դասակարգի և չքավոր գյուղացիութեան:

Բայց յերրորդ դասակարգը, բուրժուազիան, նույնպես չեւ ուզում սահմանափակումներ ձանաչել: Նա չեւ ցանկանում վորեւ պայմանով համաձայնութեան գալ Խորհրդային Իշխանութեան հետ, վոր առաջարկում եր Ընկ. Լենինը 1918 թ. ապրիլին, Համաշխարհային բուրժուազիայի ոգնութեամբ նա կյանքի և մահու կռիվ սկսեց Խորհրդային Ռուսաստանի դեմ: 1918 թ. ամառը, ամբողջ ուսական բուրժուազիան հանդես եր դալիս մերթ վորպես լատիշ, լեհ, մերթ՝ ուկրաինացի, մերթ՝ գերմանացի, վորպեսզի գերմանական իմպերիալիզմի պաշտպանութեամբ ազատվեի Խորհրդային Իշխանութեան հետ պայման կնքելու անհրաժեշտութեանից: Չեխ-սլավական ապստամբութեանից և առավել Գերմանիայի պարտութեանից հետո ուսական բուրժուազիան, հույս դնելով Անտանտայի պաշտպանութեան վրա, անմիջապես կատարի պայքար ստեղծեց Խորհրդային Իշխանութեան դեմ: Բուրժուազիան բնավ մտադրութեան չունեի կապալով վերցնելու իր ձեռնարկութեանները, վորովհետեւ հույս ուներ պաշտպանելու և իր ձեռքին պահելու այն, ինչպես իր սեփականութեանը: Նախքան հնարավորութեան ձեռք բերելը՝ նոր տնտեսական քաղաքականութեան վարելու համար, անհրաժեշտ եր ձգտել բուրժուազիային, վոչ թե իրավապես, այլ փաստորեն, հարկավոր եր ջախջախել նրան յերկու տարվա

պատերազմում: Նախ անհրաժեշտ էր ապացուցել ռուս բուրժուազիային և համաշխարհային կառավարչին այն, Վոր ռուսական արդյունաբերությունը պրոլետարիան պետություն սեփականություն է, և վոչ բուրժուազիային, վորպեսզի հետո հնարավորություն լինի մտածելու այն մասին, թե ինչպես բզտագործել բուժուազիայի ուժերը արդյունաբերության հետագա զարգացման համար: Պատերազմը անխուսափելիորեն տանում էր դեպի ընդհանուր ազգայնացում: Ազգայնացումն անհրաժեշտ էր վոչ միայն ջախջախելու համար տիրապետող դասակարգին, խորտակելու նրա քաղաքական ուժը, վորը խարսխվում է անտեսական գործության վրա: Ազգայնացումն անհրաժեշտ էր նաև այն նպատակով, վոր աշխարհ անհնար էր վարելու բուրժուազիայի սկսած պատերազմը: Մեր ամբողջ կատաղի կենտրոնացումը վոչ այլ ինչ էր, բայց յեթե ամբողջ յերկրի կողոպտումը արդյունաբերական միջոցները մեր ձեռքին հավաքելու և պատերազմը վարելու համար: Ռազմական նախազգծումներն ու միջոցները, ինչպես ճիշտ մատնանշում է իր գրքույկում պարենտուրքի մասին լենկ. կենինը, քաղաքում առաջ բերին ռազմական կոմունիզմ, իսկ գյուղում—մասնատրում (разверстка), այն է՝ հացի նույն կողոպտուր գորքին ու քաղաքը կերակրելու համար: Կար, արդյոք, մի այլ հնարավորություն անհրաժեշտ քանակություն մետաղ և հաց հավաքելու: Այն, այդպիսի հնարավորություն չկար: Փոքրաքանակ արդյունաբերական ապրանքները չէր կարելի թողնել սպեկուլյացիայի քմայրին: Հապա ինչպես կարելի յեր հաց հավաքել՝ վիճակագրորեն հաշվետույթ տուրքի միջոցով, յերը դեռ չէր կար իշխանության ապարատ այդորինակ նախազգծումների համար և յերը մինչև 1919 թ. վերջը մենք չէինք ուղ-

տվում Սիբիրի և Ուկրաինայի հացային միջոցները, իսկ կենտրոնական Ռուսաստանի հացն այնքան չընչին էր, վոր անհնար էր գյուղին վորեք ավելցուկ թողնել, մանավանդ վոր արդյունաբերական ապրանքներ գրավման շնորհիվ, գյուղացին իր ավելցուկի համար վոչինչ չէր կարող ստանալ ազատ շուկայում, յեթե նույնիսկ այդպիսին գոյություն ունենար:

Քաղաքական, ռազմադիտական և տնտեսական անհրաժեշտությունից բացի, ռազմական կոմունիզմը քաղաքականությունն ուներ ևս մի աղբյուր, այն է՝ սոցիալ-հոգեբանականը: Յեթե դեռ հեղափոխություն սկզբին հաղթող դասակարգը չէր կարող թողնել իր հակառակորդի ձեռքին բոլոր այն նյութական միջոցները, վորոնք հնարավորություն էին տալիս բուրժուազիային լնդալ կերպով վարելու ճոխ կյանք, առավել ևս այդ չէր կարող անել պրոլետարիատը այն մոմենտին, յերը Ռուսաստանը ներկայացնում էր մի միակուս սպառազինված բանակ, յերը բանվոր-գյուղացիական մասսաները հաղթելու համար անուր տառապանքներ պետք է կրեին: Հնարավոր էր, արդյոք, այն մոմենտին, յերը բանվորահինները քաղցի ու սրտի մեջ, վատ լուսով, գիշեր ու ցերեկ շինել կին կարում բանակի համար, հնարավոր էր այն ժամանակ թույլ տալ, վոր խանութներում փայլեյին ճոխ ցուցափեղկերը (վիտրին), լրբարար ցույց տալով բազմապատկ մարտիկներին, թե ինչպես է ապրում ու վայելք անում բուրժուազիան: Դա անկարելի յեր: Խորհրդային կառավարությունը պետք է ձգտեր սպարտական կենսաձևի, վորովհետև միայն այդ էր համապատասխանում Խորհրդային Ռուսաստանի հետամնաց կյանքին:

Բայց չէ վոր ռազմական կոմունիզմը հակառու էր Ռուսաստանի կառուցվածքին, նրա տնտեսության:

Այն, առաջինը հակասում էր յերկրորդին, վորչափ հարցը վերաբերում է գյուղին: Ռազմական կոմունիզմի հաղթանակը քաղաքում միանգամայն հնարավոր եր: Յեթե համաշխարհային հեղափոխությունը հաղթանակներ այնքան շուտ, ինչպես կարելի չէր սպասել 1919 թվին, Յեվրոպայի բանվորության զինաթափման նախորդակին, և ինչպես կարելի չէր յենթադրել 1920 թ., յերբ մենք արշավում էինք Վարշավայի վրա, պատմականորեն միանգամայն հնարավոր էր ռուսական խոշոր արդյունաբերության վերածնունդը: Երբեք պետական սեփականատիրություն, տնտեսական ճշգրիտ պլանի հիմունքներով: Յեվրոպական բանվորներից մեծքանակներ ստանալով, խորհրդային իշխանությունը կարող էր մտածել ամբողջ խոշոր արդյունաբերությունը իրեն վերադարձնելու մասին: Բայց յեթե անգամ համաշխարհային հեղափոխությունը չէր հաղթանակներ Յեվրոպայում, յեթե մենք վերցնեինք միայն Լեհաստանը և կանգնեինք Գերմանիայի դուռների մոտ դենքը ձեռքներին, այդ դեպքում նույնիսկ հնարավոր էր, վոր մեր ուշիվ հարկադրեր բուրժուազիային անելու մեղ այնպիսի զիջումներ, յերբ Ռուսաստանի ծայրամասերում՝ Սիբիրում, Կովկասում, Թուրքեստանում կոնցեսիաների համար, կոնցեսիան հիմունքներով նոր արդյունաբերություն ստեղծելու իրավունքի համար, համաշխարհային բուրժուազիայից կը ստանայինք արդյունագործության անհրաժեշտ միջոցներ մեր պետական արդյունաբերության համար յեվրոպական Ռուսաստանում: Ի՞նչ կը լիներ այն ժամանակ Ռուսաստանը սոցիալապես: Բանվոր դասակարգի ձեռքին կը գտնվեր ամբողջ արդյունաբերությունը, հազորդակցության միջոցները: Գյուղացիության ձեռքին կը լիներ հողը: Վերածնված արդյու-

1003
72349

նաբերությունը հնարավորություն կը տար պրոլետարիատին հրաժարվելու մասնատրուից (разверстка) և հաց ստանալու բնատուրքի և մասամբ պետական արդյունաբերական ապրանքների փոխանակման միջոցով: Դա կոմունիզմ չէր լինի, բայց դա կը լիներ մի խոշոր քայլ դեպի սոցիալիզմի նախադուռը: Դա կը նպաստեր ելեքտրոֆիկացիայի ծավալման և գյուղացիության համար կը ստեղծեր անհրաժեշտ պայմաններ, անցնելու արդյունաբերության կոլեկտիվ ձևերին:

Այդ չը հաջողվեց: Յերկարատե քաղաքական պատերազմը մեղ թուլացրեց տնտեսապես և թույլ չը տվեց իր (պատերազմի) վախճանից հետո մեղ համար շահավետ համաձայնություն կնքել համաշխարհային բուրժուազիայի հետ: Մեր արտաքին կացությունն անկայունությունը հնարավորություն տվեց բուրժուազիային խոսելու մեղ հետ կոնցեսիաների մասին, վոր մեղ համար այնքան էլ ձեռնառու չէ: Ուստի և մենք ստիպված էինք ընդունելու մասնիկ և միջին արդյունաբերության վերականգնումը կապիտալի պայմաններով, մի բան, վոր կը վերականգնի ռուս բուրժուազիայի մի մասը: Մենք ստիպված ենք կոնցեսիաներ տալ և վոչ ձեռնառու պայմաններով, կոնցեսիաներ մենք տալու յենք Կենտրոնական Ռուսաստանում, որտեղ կապիտալը շահագործում է մեր արդեն զոյություն ունեցող գործարանները այն ժամանակ, յերբ այդ կապիտալը պետք է զարգացնէր մեր տակավին անձեռնամուխ մնացած արտադրական ուժերը: Մեր անելիքն այժմ այն է, վոր մենք ապահովենք բանվորական իշխանության համար միայն կենտրոնական արդյունաբերական ձեռնարկությունները: Մենք գիտակցաբար գնում ենք դեպի համակենդանություն բուր-



ժողովրդի հետ, վերին, անտարակոյս, վտանգ և ներ-
կայացնում խորհրդային Իշխանութեան համար, վո-
րովհետև խորհրդային Իշխանութիւնը կորցնում է
արդյունաբերական արտադրութիւնների մենաշնորհը
(մոնոպոլիա) գյուղացիութեան վերաբերմամբ:

Արդո՞ք դա կապիտալիզմի լիակատար հաղթա-
նակ է: Արդո՞ք ռուսական հեղափոխութիւնը զբաղւում
է իր սոցիալիստական բնույթը: Ապարդիւն
չհղան մեր ջանքերը, անտեղի զոհարելութիւն չէ՞ր
մեր յեռաձայն պայքարը:

Յեթե սկսենք վերջին հարցից, ապա զարգացման
ամբողջ ընթացքը սույն կը տա, վոր յեթե մենք
անտեսապէս չը ջարդեցինք բուրժուազիային, եկապրո-
պրֆացիայի չենթարկեցինք նրան, բուրժուազիան վոչ
մի պատճառ չեր ունենա զայլու մեզ մօտ վորպէս
կապալառու, վորովհետև այլապէս նա կը լիներ ար-
դյունազորութեան միջոցների սեփականատեր: Յեթե
մենք նրան չը ջարդեցինք, կոնցիսիաների մասին
խոսք ել չեր լինի. ոտարեկըյա կապիտալը առանց
այն ել կը տիրապետեր Ռուսաստանում: Յեւ յեթե,
ինչպէս մասնաշնչեցինք, մեր տնտեսական քաղաքա-
կանութիւնը 1919 թ. և 1920 թ. թ. անհրաժեշտ եր
հաղթելու համար, միաժամանակ այդ քաղաքականու-
թիւնը մեր նոր տնտեսական քաղաքականութեան
նախադրյալն եր:

Ինչպիսի ձևափոխութիւն է մտցրել մեր նոր
տնտեսական քաղաքականութիւնը դասակարգերի
փոխ-հարաբերութեան մեջ: Մասնատրման (разверстка)
քաղաքականութիւնը դուրսէ կարող եր լինել միայն
փոխանցման քաղաքականութիւն: Նրանից մենք կը
հրաժարվեցինք, յեթե նույնիսկ հաղթանակեր համաշ-
խարհային պրոլետարիատը: Արդյունաբերութեան մեջ

մեր զինուորներն այժմ ժամանակավոր զինուորներ են,
ի հարկէ վոչ այն իմաստով, վոր մի տարուց հետո
մենք նորից կը զբաղենք կուտակած կապիտալը:

Մեր տնտեսական քաղաքականութիւնը յերկա-
րտու ժամանակաշրջանի քաղաքականութիւնն է, բայց
այնուամենայնիվ նա անցողական է: Մեր նպատակը
այն է, վոր արդյունաբերութիւնը պահենք բանվորա-
կան պետութեան ձեռքին: Սակայն, ներկայումս, պե-
տական արդյունաբերութիւնը կազմում է ընդհանուր
արդյունաբերութեան մի մասը միայն, պրոլետարական
կառավարութեան նկի բազան միայն: Ինչ է նշանա-
կում այդ: Դա նշանակում է, վոր մենք հետ ենք
շարժված, վոր մենք պահում ենք միայն այն զէրքերը,
վորոնք անհրաժեշտ են պահպանելու բանվորների և
գյուղացիների իշխանութիւնը:

Նշանակում է դա, արդյոք, այն, վոր հեղափո-
խութիւնը սոցիալիստական չէ: Վոչ. Դա նշանակում
է միայն այն, վոր հաղթող բանվոր դասակարգը ի
վիճակի չէ իրագործելու իր ամբողջ ծրագիրը, նույն-
իսկ այն ծրագիրը, վորը Ռուսաստանում, մասն բուր-
ժուական մի յերկրում, տնտեսանորեն իրականանալի չէ:
Բայց մի դասակարգ, վորը հանգիւղելով մյուս դասա-
կարգերի զորեղ դիմադրութեան, տվյալ դեպքում հա-
մաշխարհային, տակաւին չը տապալված կապիտալի
դիմադրութեան ստիպված է նահանջել, այդ դասա-
կարգը բնավ չի դադարում լինել հաղթող, տիրապե-
տող դասակարգ: Յերբ ցարիզմը, կալվածատերերի
կառավարութիւնը ստիպված յեղավ զինուորներ անել
կապիտալին, այնպէս վոր բուրժուազիան դարձավ
տնտեսապէս տիրապետող դասակարգ, ցարիզմը շա-
րունակեց գոյութիւն ունենալ, իսկ կալվածատիրական
դասակարգը չը կորցրեց իր քաղաքական տիրապետու-

Թյունը: Ռուսաստանը շարունակեց մնալ կիսաճորտատիրական վիճակում: Յեթե Յեվրոպայում բուրժուազիան, ջանալով կասեցնել հեղափոխությունը, ըստիպված կը լինի ընդունել պետական կապիտալիզմը, և նույնիսկ բանվոր դասակարգի կոնտրոլը նրա վրա, ապա այդ ընտելի նշանակի, վոր բուրժուազիան կը դադարի լինել տիրապետող դասակարգ: Կրանով մենք մոտենում ենք վերջին հարցին: Խոսքը վոչ թե մեր հեղափոխության ընույթի մասին է, վորովհետև հեղափոխությունն արդեն իրականացված է և պատմության տարեգրության մեջ կը մնա վորպես սոցիալիստական հեղափոխություն, յեթե նույնիսկ ողւս բանվոր դասակարգը ժամանակավորապես պարտվի, այլ խոսքը վերաբերում է հեղափոխության հետևանքներին, նրա յեկրին:

Կը կարողանան, արդոք, բոլշևիկները իշխանությունը պահել՝ այն ժամանակ, յերբ գլուղում գոյություն ունի ապրանքային արդյունադրություն, իսկ արդյունաբերության մեջ՝ կապիտալիզմի մասնակի վերածնություն: Մեր հակառակորդներն ասում են մեզ. չե՞ վոր տնտեսությունը վորոշում, ուղղություն է տալիս քաղաքականության, վոր բուրժուազիային արած զիջումները անխուսափելիորեն առաջ կը բերեն և քաղաքական զիջումներ:

Մարքսիզմի այդ կարծեցյալ այբուբենը վոչ մի ընդհանուր բան չունի մարքսիզմի հետ, վորովհետև նա վերացական է, հաշվի չի առնում ժամանակն ու տարածությունը: Յեթե բազմամյա ժամանակամիջոցում կապիտալիզմի ուժերն աճեյին համաշխարհային մասշտաբով, իսկ հեղափոխության ուժերը նվազեյին, այդ դեպքում, վերջին հաշվով բանվոր դասակարգը պետք է լինի հաղթված: Սակայն, չե վոր

Ռուսաստանում կալվածատիրական դասակարգը բուրժուազիային տնտեսական զիջումներ անելուց հետո դեռ յերկար ժամանակ քաղաքականապես կայուն եր: Ճիշտ է, տնտեսական զիջումներն հաջորդեցին քաղաքական զիջումները, իսկ այնուհետև կալվածատերերի լիակատար պարտությունը, բայց այդ յեղալ այն պատճառով, վոր կալվածատիրական դասակարգը գրանցվում էր պատմության վայրէջքում, նա միտնող դասակարգ էր: Սակայն բանվոր դասակարգը համաշխարհային մասշտաբով մի դասակարգ է, վորը գնում է դեպի հաղթանակ, իսկ բուրժուազիան համաշխարհային մասշտաբով մի դասակարգ է, վորը գանվում է կազմալուծման պրոցեսում և պատմականորեն դատապարտված է մահվան: Ուստի բանվոր դասակարգը Ռուսաստանում հնարավորություն ունի սահմանափակվել տնտեսական զիջումներով և հրաժարվել քաղաքական զիջումներից բուրժուազիայի հանդեպ, ունենալով այն շանսերը, վոր նրա ուժերը թե ողւսական և թե համաշխարհային մասշտաբով կաճեն ավելի արագ, քան ողւս բուրժուազիայի ուժերը: Ռուսական հեղափոխության պատմությունը հաստատում է, վոր այդ հեղափոխությունը հանդիսանում է առաջին սոցիալիստական, առաջին պրոլետարական հեղափոխությունը: Այդ հեղափոխությունը պրոլետարական և մանր-բուրժուական յերկրում: Ուստի և նրա հետևանքներն ու յեկքը չեն լինի այն, վորպիսին կունենա պրոլետարական հեղափոխությունը՝ որինակ Անգլիայում կամ Ամերիկայում, վորտեղ բանվոր դասակարգը յերկարատե պայքարից հետո գրավելով իշխանությունը, կը կարողանա հեշտությամբ և արագ իրագործել իր ծրագիրը, նույնիսկ գլուղում: Ռուսական հեղափոխությունը պրոլետարական հեղափոխություն է, վորի թե

ներքին և թի արտաքին միջավայրը աննպաստ և ակնհայտ, քան վերևի մեկ ուրիշինը: Բայց նա պրոլետարական հեղափոխություն է, նա սոցիալիստական հեղափոխություն է, և Հոկտեմբերի ավանդները՝ համաշխարհային հեղափոխություն ծրագրերն են:

Հոկտեմբերը սխալանքների կատակերգություն տարեդարձ է, նա տարեդարձ է և այն պայքարի, ուր, ինչպես ասում են մենշևիկները, բռնվոր դասակարգը անգիտակցաբար դարձավ ուրիշ դասակարգի գործիք: Հոկտեմբերը միջազգային մեծ պրոլետարական հեղափոխության սկզբնավորության տարեդարձն է, թեև այժմ կռվելով նահանջած զորքերում, հաշվելով մեր պայքարի զոհերը, մենք անդրդվելի համոզմունքով և լիակատար հանգստությամբ կարող ենք ասել, Հոկտեմբերին մենք գնացինք ուղիղ ճանապարհով և հաղթությունը կը լինի մեր կողմը:

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

№ 8

ԳԻՆԸ

1. Կարլ Մարքս—Վարձու աշխատանք ու կապիտալ, թարգմ. Մա. Հանուսյանի . . . 15 կ.
2. Ռիմսկեյի ծրագիր պատմության . . . —
3. Ռիմսկեյի ծրագիր արվեստի . . . —
4. Ի. Տոպոլով—Հարկավոր է արդյոք բանվորներին ու զոհողացիներին սեփական գործը և ինչի համար . . . 19 կ.
5. Գոմուրիսի առաջին այբբենաբանը . . . 15 կ.
6. Գրպանի որսցույց 1922 թ. . . 2 կ.
7. Ա. Մյասնիկյան (Ա. Մարտունի)—Մեր քաղաքականությունն ու հերթական խնդիրները . . . 5 կ.
8. Հ. Նավակասիկյան—Դեռերմինաներ (վիմատիկ) 1 ր. . . 25 կ.
9. Պասի որսցույց 1922 թ. . . 15 կ.
10. Հ. Նավակասիկյան—Հանքահաշիվ վիմատիկ . . . 5 կ.
11. Հ. Մանսնիկյան—Հայաստանի պատմությունը թուրք-թաթարական արշավանքների շրջանում (վիմատիկ), տպագրվում է . . . —
12. Գ. Եղիյան—Աշխատանքի դպրոցը, ձեռնարկ (տպագրվում է) . . . —
13. Ռիմսկեյի ծրագիր մաթեմատիկայի . . . —
14. Ռիմսկեյի ծրագիր աշխարհագրություն . . . —
15. Սուրխարյան—Գրական գոհարներ (քրիստոմատիկ), տպագրվում է . . . —
16. Լ. Ն. Նիկոնով—Բույսի կյանքը (պարզ փորձերով և 12 նկարով), թարգմ. Ա. Տ. Գ. . . 60 կ.
17. Ա. Հակոբյան—Փիլիկա (վիմատիկ), տպագրվում է . . . —
18. Բժ. Վ. Արժունի—Անատոմիա (վիմատիկ) . . . 4 ր. 50 կ.
19. Նոսաների բույր . . . 20 կ.
20. Աբխասանի դպրոց (մայրենի լեզվի դասագիրք) Բ. տարի, տպագրվում է . . . —
21. Ն. Լեմին—Պարենհարկի մասին, թարգմ. Թ. Ա. . . 15 կ.
22. Դեպի Լույս (այբբենաբան հասակավորների համար), կազմեց Հովհաննես Տեր-Միլաբյան . . . 20 կ.
23. Պակրովսկի—Ռուսաց պատմությունը ամենահազիբն գծերով, թարգմ. Լեո (տպագրվում է) . . . —



ՀՀ Ազգային գրադարան



NL0397171

24. Հովհ. Նավակաթիկյան—Վերլուծական յերկրաչափություն (վիճատիպ), տպագրվում է . . .
25. Մրոչեկ.—Ցեռանկյունաչափություն, թարգմ. Աբշահ Ցոնյանի. (վիճատիպ) տպագրվում է . . .
26. Մ. Աբեղյան.—Առաջնորդ հայոց լեզվի նոր ուղղագրության . . . 8 կ.
27. Միխ. Գուրեվ.—Քերքի սակավության և սովի պատճառները, թարգմ. Գ. Հ. . . 5 կ.
28. Կ. Մարթա յեկ Ֆ. Ենգելս.—Կոմունիստական Մանիֆեստ, թարգմ. Ընտղրից Պ. Մակինցյանի (տպ.) —
29. Կ. Ռադեկ.—Հոկտեմբերյան հեղափոխությունը և նրա տեղը պատմության մեջ, թարգմ. Գ. Հ. . . 5 կ.
30. Ինչպես կազմել հերբարիում,—ըստ Նիկոնովի կազմեց՝ Ե. Մուշեղյանց. . . 10 կ.
31. Ա. Տերտերյան.—Հայոց նոր գրականությունը (վիճ.) 1 ր. 25 կ.
32. Վ. Բիսոբյանսկի.—Պայքար աշխարհի բարեքեներ համար, թարգմ. Գ. Հ. . . 5 կ.
33. Հայաստանի պատկանական կազմակերպության ծրագիր և կանոնադրություն —
34. Մ. Աբեղյան.—Համառոտագրություն հայոց գրականության պատմության (վիճատիպ) . . . 1 ր. 50 կ.
35. Ուրիանկեի ծրագիր մայրենի լեզվի —
36. Դատրնկեր Բ. Տարի . . . 80 կ.
37. , Գ. , . . 1 ա.
38. Ա. Մուսիլյան.—Սոցիալիստ-հեղափոխականներն Յնդրկովհասում (թուրքիկ ակնարկներ), . . . 15 կ.

Գիրք 5 կոպ.